Օրհնեա՜լ է մանուկ Յիսուսը, որ իւր փրկարար Ծննդեան տօնի. մեզ պատեհ է առաջնորդել. Օրհնեալ է՜ և Դո՛ւ, անզուգական Հայր, որ սիրալիր ակնարկութեամբ ընդունում և խրախուսումես մեզ՝ յառաջ գնալ լուսոյ և ճշմարտութեան ճանապարհով.

Դու մեզ օրհնիր Վեհափառ Հայր, մենք էլ քեզ կօրհնենք. Դու շնորհք խնդրիր մեզ համար, իսկ մենք երկար կեանք քեզ համար. Դու մեր ուսումնարանի վերայ քաղցր աչք ունեցիր, պաշտպանիր նորա ապագան, մենք էլ քո ջանքը խոստանում ենք պահել. Քո սուրբ Աջովդ փոքրիկ Յիսուսի շնորհքը թող հանգչի մեր վերայ, իսկ մեր սրտաբուղխ կեցցէով թող շատանայ քո թանգագին կեանքը երկար տարի՝ ի լուսաւորութիւն բոլոր Հայ զաւակների.

Կեցցէ՜, կանչենք սիրելի՛, ընկերնե՛րս, մեր խնամակալ Հայրը, կեցցէ Հայոց ազգի մեծ Լուսաւորիչը.

Երգենք, կեցցէ՜, կեցցէ՜ և շատ կեցցէ՜.

ՊԵՐՃԱՆՈՅՇ ՊՌՕՇԵԱՆՑ

Ո՛ՒՐ ԿՑԱՆԿԱՅԻ ՄԵՌԱՆԵԼ.

Ասա՛ դու ինձ, սիրո՛ւն սոխակ,
Երբ կըչափուի քո ժամանակ,
Ասա՛ փութով իմ սիրունակ,
Ո՞ւր դու կամիս, որ հողանաս,
Թէ կըգայ օրհաս։
Կամի՞ս մեռնել պանդըխտական,
Հեռու երկրից հայրենական,
Թէ ընկնի՞լ մէջ սովորական
Վարդի ծոցում նստած անահ՝
Հասանէ քեզ մահ։
Ա՜խ, իմ սոխակ կանգնած էր լուռ,
Նայում էր ինձ կարծես տըխուր,
Եւ նա թըռաւ եւ գնաց ո՛ւր,
Թէ պատասխան դու ինձ չըտաս,
Թող բարեաւ գնաս։
Իսկ ես հոգւով, սըրտով ցանկամ,
Իմ Հայաստան մի օր գընամ,
Եփրատի մօտ ես քընանամ,
Թո՛ղ պարաստէ ինձ Հայաստան
Իմ մահուս դամբան։

Թէեւ միէ ամենայն տեղ
Խրմել մահուան գառնահամ գեղ,
Խիղճ ունելով մաքուր անմեղ,
Բայց մօտ Հայոց սուրբ սահմանին
Հանգչի իմ մարմին,
Այնտեղ ինձ մահ օրհասական,
Կ'լինի նոր այժ շունչ կենսական,
Աղաչում եմ թոռղ Հայասան,
Ընդունի իմ անշունչ մարմին՝
Ուխտս է այս վերջին.

Օրէորդ Եղիսաբէթ Մօլիսլէան։

Ադրիան.

ՀԱՇԻՒ

Շարունակութիւն տպեց և ծախսոց արարելոց է պէտս շինութեան և վերջանարարութեան ընդարձակեանց Ս. Աստուածածնայ Ամենեկեղեցոյն Հայոց Շամախոյ քաղաքի։

ՄՈՒՏՔ.

	Ր.	Կ.
Յաստիճանաւոր Ջաւատ բէկէ Մարտանեանց նուիրագրեամ	200	
Յաղնուական Մելքոնէ Յովհաննէսեան Միրզայեանց . .	1000	
Վարձ եկեղեցական կրպակի	5	
Սատցաւ Յակոբ Թախտամեանց ի գին վաճառեալ եկեղեցական մանր քարերի	2	
Տոհմական պատուանուն քաղաքացի Պօղոսն Ներսէսեանց լրացուցեալ է պակասորդ ի սեպհականութենէ իւրմէ.	56	55
Ընդամէն գումար մտից	1263	55

ԾԱԽՔ.

Ի գին 278½ հատ զանազան հասարութեան տախտակաց, 22 հատ մաշտաի փայտից և երկու հատ մեծ գերանաց (բրուս)	622	90
Մնացորդ վարձ հիւսն վարպետաց վասն տախտակամածելոյ և կամարակապ շինութեան առաստաղաց և այլ թերութեանց	281	10
Ի գին բևեռաց, երկաթեայ օղակաց ջահից, սկոբկի և կրիչ կանելի վասն դրանց եկեղեցւոյ	89	47